

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2022 թվականի
հունիսի 23-ի N 927 - Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2020 թվականի
ապրիլի 30-ի N 718-Ն որոշման

**ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ
ՍՏՈՒԳԱԹԵՐԹ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

Ստուգաթերթ N 3.3

**Մասնագիտացված բժշկական օգնություն
Հոգեբուժական բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն
(ՏԳՏԴ ԾԱԾԿԱԳԻՐ՝ Q 86.22)**

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

_____ Առողջապահական և
աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ստորաբաժանման անվանումը, _____ հեռախոսահամարը, գտնվելու վայրը

_____ ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը

_____ ազգանունը, անուն, հայրանունը

_____ ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը

_____ ազգանունը, անունը, հայրանունը

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ __20__թ. _____ ավարտը՝ __20__թ. _____

Տնտեսավարող սուբյեկտի անվանումը,

Պետական ռեզիստրի գրանցման համարը, ամսաթիվը

Հ Վ Հ Հ

--	--	--	--	--	--	--	--	--	--

Տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները

(հեռախոսահամարը)

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ փոխարինող անձի ազգանունը, անունը, հայրանունը

(հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագրի համարը՝ _____ տրված՝ _____ 20__թ.

Ստուգման նպատակը, պարզաբանման ենթակա հարցերի համարները՝ _____

ՀՀ	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆ
1	Գործունեության տեսակները, լիցենզիան/ները	

2	Տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման վայրը և կոնտակտային տվյալները	
3	Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումները/բաժանմունքները	
4	Մահճակալային հագեցվածությունը	
5	Բուժաշխատողների թիվը՝ Ավագ Միջին	

ՀԱՐՑԱՇԱՐ

**Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից կազմակերպություններում
Հոգեբուժական բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում իրավական նորմերի նվազագույն պահանջների կատարման նկատմամբ
իրականացվող ստուգումների**

ՀՀ	Հարց	Հղում նորմատիվ իրավական ակտին	Պատասխան			Կշիռ	Ստուգման մեթոդ	Մեկնաբանություններ
			Այո	Ոչ	Չ/ս			
1	Կազմակերպությունն ունի բժշկական օգնության տեսակի իրականացման թույլտվություն՝ լիցենզիա:	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 27, մաս 1,				5	Փաստաթղթային	
2	ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ							

2.1	Հոգեբուժական կաբինետն իրականացնում է վիճակագրության և մատենավարման ծառայություն:	Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշում, հավելված 1, կետ 1.40				2	Դիտողական	
3	Ավագ բուժաշխատողի կաբինետում առկա են հետևյալ սարքավորումները և բժշկական գործիքները.	Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշում, հավելված 1, կետ 1.40						
3.1	Աշխատանքային սեղան					0.25	Դիտողական	
3.2	Աթոռներ					0.25	Դիտողական	
3.3	Անհետաձգելի բուժօգնության պահարան					1	Դիտողական	
3.4	Հանդերձապահարան					0.25	Դիտողական	
4	Հոգեբուժական կաբինետը հագեցված է կադրերով.	Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշում, հավելված 1, կետ 1.40						
4.1	Ավագ բուժաշխատող-հոգեբույժ՝ վերջին 5 տարվա ընթացքում համապատասխան վերապատրաստման կամ շարունակական մասնագիտական զարգացման հավաստագրի առկայությամբ	Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշում, հավելված 1, կետ 1.40: Կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման Հավելված N 5 կետ 18				3	Փաստաթղթային	
4.2	Միջին բուժաշխատող	Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշում, հավելված 1, կետ 1.40: Կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման Հավելված N 5 կետ 18				2	Փաստաթղթային	
5	Հոգեբուժական կաբինետում վարվում են							
5.1	Նշում 1*-ում նշված նեղ մասնագետների գրառումների գրանցամատյան:	Առողջապահության նախարարի 2021				2	Փաստաթղթային	

		թվականի դեկտեմբերի 6-ի N 88-Ն հրաման կետ 1 ենթակետ 10, հավելված 10					
5.2	Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի ամբուլատոր բժշկական քարտ: Նշում 2*	Առողջապահության նախարարի 2021 թվականի ապրիլի 26-ի N 25-Ն հրաման, կետ 1 ենթակետ 2, հավելված 2: Առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 04-ի N 61-Ն հրաման:				3	Փաստաթղթային
5.3	Հոգեբուժական օգնությունը և սպասարկումն իրականացվում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ օրինական ներկայացուցչի գրավոր իրազեկված համաձայնության (դիմումի) դեպքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի (վկայարկում, հաշվառում, հոգեբուժական հետազոտում և բուժում):	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 17, մաս 1, հոդված 19, մաս 1, հոդված 20, մաս 1: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 90-Ն հրաման, հավելված 1 կետ 3:				3	Փաստաթղթային
5.4	Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին հոգեբուժական կազմակերպությունում հաշվառելու հիմք է նրա մոտ առաջին անգամ ախտորոշված հոգեկան խանգարումը:	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 21, մաս 2: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրամանի հավելված 1-ի 10-րդ կետ:				3	Փաստաթղթային

5.5	Կազմակերպությունում պահպանվում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հաշվառումից հանելու հիմքերը (հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մահը, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի << քաղաքացիությունը դադարեցնելը՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի՝ կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն, հոգեբուժական հանձնաժողովի գրավոր տված «Ներկայում հոգեպես առողջ է» եզրակացությունը):	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 21, մաս 3: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրամանի հավելված 1-ի 10-րդ կետ:				3	Փաստաթղթային	
5.6	Երբ առողջական վիճակից ելնելով հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը չի կարող ինքնուրույն այցելել հոգեբուժական կազմակերպություն, անհրաժեշտության դեպքում արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական կազմակերպության բժիշկ-հոգեբույժի կողմից հաշվառման մեջ գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին տնային այցը կազմակերպվում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչի համաձայնությամբ:	Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրամանի հավելված 1-ի 16-րդ կետ:				2	Փաստաթղթային	
5.7	Առանց հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ առանց օրինական ներկայացուցչի համաձայնության հոգեբուժական վկայարկումն իրականացվում է հետաքննության մարմնի (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի), քննիչի, դատախազի, դատարանի (իրենց վարույթային պարտականությունները կատարելիս) կողմից արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական կազմակերպություն ներկայացված գրավոր դիմումների հիման վրա: Նշում 3*	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 19, մաս 2: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման, հավելված 1 կետ 4:				3	Փաստաթղթային	
5.8	Եթե հոգեբուժական վկայարկման արդյունքում հաստատվում է, որ անձը վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար, արտահիվանդանոցային	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին»				3	Փաստաթղթային	

	<p>հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական կազմակերպությունը շտապ բժշկական օգնության ծառայությանը մեկ ժամվա ընթացքում հեռախոսազանգի միջոցով հայտնում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հետագա հոգեբուժական օգնությունը և սպասարկումը կազմակերպելու նպատակով հոգեբուժական կազմակերպություն տեղափոխման անհրաժեշտության վերաբերյալ:</p>	<p>օրենք, հոդված 19, մաս 3: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման, հավելված 1 կետ 6</p>						
5.9	<p>Այն դեպքում, երբ շտապ բժշկական օգնության ծառայությանը, անձի հոգեկան վիճակով պայմանավորված, չի հաջողվում կազմակերպել անձի տեղափոխումը, ապա, արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական կազմակերպությունն անհապաղ հեռախոսազանգի միջոցով անձի բնակության վայրի ոստիկանության ստորաբաժանմանը տեղեկացնում է համապատասխան հոգեբուժական կազմակերպություն ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի տեղափոխման անհրաժեշտության վերաբերյալ:</p>	<p>Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման, հավելված 1 կետ 7</p>				3	Փաստաթղթային	
5.10	<p>Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին հարկադիր արտահիվանդանոցային հսկողության կամ բուժման ընդունելու համար հիմք է տվյալ անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը:</p>	<p>«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 26, մաս 1: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման, հավելված 1 կետ 15</p>				2	Փաստաթղթային	
5.11	<p>Հարկադիր արտահիվանդանոցային հսկողության կամ բուժման դեպքում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը սահմանված կարգով տեղեկացվում է իր իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակումների, հարկադիր հսկողություն կամ բուժում ստանալու նպատակի և պատճառների մասին:</p>	<p>«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 26, մաս 2: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի</p>				2	Փաստաթղթային	

		08-ի N 90-Ն հրաման, հավելված 1 կետ 15						
5.12	Հարկադիր արտահիվանդանոցային հսկողության և բուժման նպատակով հոգեբուժական կազմակերպություն հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի այցերի հաճախականությունը սահմանում է բժիշկ-հոգեբույժը՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոգեկան վիճակին համապատասխան, ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 26, մաս 3: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման, հավելված 1 կետ 15				3	Փաստաթղթային	
5.13	Հարկադիր արտահիվանդանոցային հսկողություն կամ բուժում իրականացնող բժիշկ-հոգեբույժը առնվազն վեց ամիսը մեկ անգամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոգեկան վիճակի մասին մասնագիտական գրավոր կարծիք է ներկայացնում հոգեբուժական կազմակերպության հոգեբուժական հանձնաժողով՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելը շարունակելու կամ փոխելու կամ դադարեցնելու հետ կապված հարցերը լուծելու նպատակով (հոգեբուժական հանձնաժողովը 10 աշխատանքային օրվա ընթացքում, քննում և տալիս է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելը շարունակելու կամ փոխելու կամ դադարեցնելու մասին եզրակացություն):	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 26, մաս 4: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման, հավելված 1 կետ 15				2	Փաստաթղթային	
5.14	Հոգեբուժական հանձնաժողովի կողմից բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները փոխվելու կամ դադարեցվելու մասին եզրակացություն տրվելու դեպքում տվյալ հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը 10 աշխատանքային օրվա ընթացքում, կցելով հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությունը բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները փոխելու կամ դադարեցնելու մասին, միջնորդություն է ներկայացնում դատարան:	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 26, մաս 5: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման, հավելված 1 կետ 15				2	Փաստաթղթային	

5.15	Հարկադրանքի միջոցը փոխելու կամ դադարեցնելու դեպքում տվյալ հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը երկօրյա ժամկետում դրա մասին գրավոր տեղեկացնում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բնակության վայրի ոստիկանության ստորաբաժանմանը:	Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 26, մաս 6: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման, հավելված 1 կետ 15				3	Փաստաթղթային	
	ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ							
6	ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ առկա են	Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշում, հավելված 2, կետ 17						
6.1.1	Արյան ճնշումը չափող գործիք					2	Դիտողական	
6.1.2	Բժշկական կշեռքներ					0,5	Դիտողական	
6.1.3	Կոմբինացված ստետոֆոնենդոսկոպ					2	Դիտողական	
6.1.4	Ռեզինե ջեռակ					0,5	Դիտողական	
6.1.5	Սիֆոնային հոգնայի հարմարանք					1	Դիտողական	
6.1.6	Թթվածնի բարձ' էրոնիտային բերանակալով					2	Դիտողական	
6.1.7	Արյան փոխներարկման շտատիվ					0,5	Դիտողական	
6.1.8	Հիվանդի սայլակներ					0,25	Դիտողական	
6.1.9	Մահճակալներ (ֆունկցիոնալ և հասարակ)					0,5	Դիտողական	
6.1.10	Բժշկական պահարաններ					0,25	Դիտողական	
6.1.11	Բժշկական զննման թախտեր					0,5	Դիտողական	
6.1.12	Հանդերձապահարաններ					0,25	Դիտողական	
6.1.13	Ճաշասեղաններ					0,25	Դիտողական	
6.1.14	Հարմահճակալային սեղանիկներ					0,25	Դիտողական	
6.1.15	Սեղաններ՝ ավագ բուժաշխատողների և բուժքույրերի համար					0,25	Դիտողական	
6.1.16	Աթոռներ՝ ավագ բուժաշխատողների և բուժքույրերի համար					0,25	Դիտողական	

6.2	Հոգեբուժական բաժանմունքը հագեցած է կադրերով.	Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշում, հավելված 2, կետ 17: Կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման Հավելված N 5 կետ 18:						
6.3	Ավագ բուժաշխատողներ՝ համապատասխան հետդիպլոմային կրթության և վերջին 5 տարվա ընթացքում վերապատրաստման առկայության դեպքում					3	Փաստաթղթային	
6.4	Միջին բուժաշխատողներ					2	Փաստաթղթային	
7	Ընդունարանում առկա են հետևյալ սարքավորումները և բժշկական գործիքները.	Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշում, հավելված 2, կետ 33						
7.1.1	Լվացարան					0,5	Դիտողական	
7.1.2	Զերմաչափ					2	Դիտողական	
7.1.3	Տոնոմետր					2	Դիտողական	
7.1.4	Ֆոնենդոսկոպ					2	Դիտողական	
7.1.5	Սառնարան					0,25	Դիտողական	
7.1.6	Բժշկական թախտ					0,25	Դիտողական	
7.1.7	Սայլակ					0,5	Դիտողական	
7.1.8	Գրասեղան, աթոռներ					0,25	Դիտողական	
7.1.9	Բժշկական պահարան					0,25	Դիտողական	
7.2	Ընդունարանը հագեցված է կադրերով.	Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշում, հավելված 2, կետ 33: Կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման Հավելված N 5 կետ 18:						

7.3	Ավագ բուժաշխատողներ - համապատասխան հետդիպլոմային կրթության և վերջին 5 տարվա ընթացքում վերապատրաստման առկայության դեպքում					3	Փաստաթղթային	
7.4	Միջին բուժաշխատողներ					2	Փաստաթղթային	
7.5	Հիվանդանոցի ընդունարանում վարվում է Նշում 4* -ում ներկայացված ձևաչափի «Հիվանդանոցային բուժման ընդունված պացիենտների հաշվառման մատյան»	Առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 18-ի N 44-Ն հրաման, հավելված 2 ձև 1:				3	Փաստաթղթային	
8	Միջամտությունների կաբինետն ունի հետևյալ սարքավորումները և բժշկական գործիքները.	Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշում, հավելված 2, կետ 80						
8.1.1	Տոնոմետր					2	Դիտողական	
8.1.2	Ֆոնենդոսկոպ					2	Դիտողական	
8.1.3	Զերմաչափ					2	Դիտողական	
8.1.4	Բարձիկ					0,25	Դիտողական	
8.1.5	Շտատիվ					0,25	Դիտողական	
8.1.6	Առաջին օգնության դեղորայքի հավաքածու					3	Դիտողական	
8.1.7	Հակաշոկային դեղորայքի հավաքածու					3	Դիտողական	
8.1.8	Թթվածնի բարձ					3	Դիտողական	
8.1.9	Բակտերիոցիդ լամպ					0,25	Դիտողական	
8.1.10	Բժշկական թախտ					0,25	Դիտողական	
8.1.11	Բժշկական պահարան՝ առաջին օգնության դեղորայքի համար					0,25	Դիտողական	
8.1.12	Բժշկական պահարան՝ հակաշոկային դեղորայքի համար					0,25	Դիտողական	
8.1.13	Մոմլաթ՝ թախտի համար					0,25	Դիտողական	
8.1.14	Սեղան՝ բուժքրոջ համար					0,25	Դիտողական	
8.2	Հիվանդանոցի միջամտությունների կաբինետը հագեցված է կադրերով.	Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշում, հավելված 2, կետ 80:						

8.3	Միջին բուժաշխատող	Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշում, հավելված 2, կետ 80 : Կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման Հավելված N 5 կետ 18:				1	Փաստաթղթային	
9	Հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը գրավոր սահմանել է հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին իր իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակումների, ինչպես նաև հոգեկան խանգարման բնույթի, առաջարկվող բուժման նպատակի, մեթոդաբանության, տևողության, ինչպես նաև կողմնակի ազդեցության և ակնկալվող արդյունքների, հոգեբուժական օգնությունից և սպասարկումից հրաժարվելու հետևանքների վերաբերյալ իրազեկելու համար պատասխանատու անձանց:	Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հավելված կետ 19: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12:				3	Փաստաթղթային	
10	Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպվում է Անձի հաշվառման վայրի արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության բժշկի ուղեգրով կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի արտահիվանդանոցային շարունակական բուժում և հսկողություն իրականացնող արտահիվանդանոցային հոգեբուժական բժշկական օգնության և սպասարկման տեսակի լիցենզիա ունեցող կազմակերպության բժշկի ուղեգրով կամ անհետաձգելի հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում պահանջող դեպքերում՝ շտապ բժշկական օգնության ծառայության բժշկի, կամ կոնտակտային անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչի կողմից դիմելու դեպքում՝ տվյալ	Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 1 կետ 9, հավելված 2 կետ 3, կետ 4: Կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշում հավելված N 7 Ձև N 1:				2	Փաստաթղթային	

	<p>հոգեբուժական կազմակերպության ընդունարանի (հերթապահ) բժշկի կամ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման ուղեգրով կամ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող պետական իրավասու մարմինների կողմից տրված ուղեգրով և ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի առկայությամբ, բացառությամբ՝ անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող դեպքերի, երբ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մոտ բացակայում է անձը հաստատող փաստաթուղթը:</p>						
11	<p>Հոգեբուժական կազմակերպություն ընդունված հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև նրա օրինական ներկայացուցչը ծանոթանում են հոգեբուժական կազմակերպության ներքին կանոնակարգին և բուժման սխեմային:</p>	<p>Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 5 մաս 2-րդ կետ 1:</p>				2	Փաստաթղթային
12	<p>Ընդունվելուց հետո մեկ օրացուցային օրվա ընթացքում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցիչը բժիշկ-հոգեբույժի կողմից իրազեկվում են՝ հաճնելով հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ օրինական ներկայացուցչի և իրազեկման համար պատասխանատուի կողմից ստորագրված իրազեկման թերթիկը (իրազեկման թերթիկը կազմվում է երկու օրինակից, մեկ օրինակը հանձնվում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում պատշաճ ծանուցմամբ՝ նաև օրինական ներկայացուցչին, իսկ մյուս օրինակը կցվում է բժշկական փաստաթղթին): Նշում 5*</p>	<p>Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 5 մաս 4-րդ, հոդված 17 մաս 6 կետ 2, հավելված կետ 16, կետ 17: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12: Առողջապահության նախարարի 2021 թվականի մայիսի 06-ի N 31-Ն հրաման:</p>				3	Փաստաթղթային
13	<p>Եթե հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը, ելնելով իր առողջական վիճակից, ի վիճակի չէ հասկանալ իր իրավունքները կամ ստորագրել</p>	<p>Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին»</p>				3	Փաստաթղթային

	իրազեկման թերթիկը, ապա տվյալ անձի իրավունքների և պարտականությունների մասին իրազեկվում է միայն նրա օրինական ներկայացուցիչը (եթե առկա է), որն էլ ստորագրում է նշված իրազեկման թերթիկը, որի մասին կատարվում է նշում բժշկական փաստաթղթերում:	օրենք, հավելված կետ 21: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12:						
14	Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի առողջական վիճակի բարելավման դեպքում տվյալ անձն իրազեկվում է իր իրավունքների, իրավունքների սահմանափակումների մասին, և նրան առաջարկվում է ստորագրել իրազեկման թերթիկը, իսկ դրանից հրաժարվելու դեպքում կրկին նշում է կատարվում բժշկական փաստաթղթերում:	Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հավելված կետ 22: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12:				3	Փաստաթղթային	
15	Կազմակերպության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող յուրաքանչյուր բաժանմունք ունի ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման համար առանձնացված հատուկ տարածք:	Առողջապահության նախարարի 2021 թվականի մայիսի 11-ի N 33-Ն հրաման հավելված կետ 3:				2	Դիտողական	
16	Կազմակերպությունում պացիենտի հանգիստն ապահովելու համար առանձնացված է պացիենտին հասանելի վայրում հանգստի գոտի՝ հագեցված բազմոցով, աթոռներով, սեղաններով, հեռուստացուցով, սեղանի խաղերով և զբաղվածության այլ միջոցներով, երեխաների համար՝ խաղասենյակներով:	Առողջապահության նախարարի 2021 թվականի մայիսի 31-ի N 46-Ն հրաման հավելված կետ 3:				2	Դիտողական	
17	Հենաշարժական խնդիրներ ունեցող և տարեց պացիենտների ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով Կազմակերպությունում տեղադրվում են թեքահարթակներ, անհրաժեշտության դեպքում տրամադրվում են հենասայլակներ կամ անձի տեղաշարժումն ապահովող առավել հարմար այլ միջոցներ:	Առողջապահության նախարարի 2021 թվականի մայիսի 31-ի N 46-Ն հրաման հավելված կետ 4:				3	Դիտողական	
18	Պացիենտի հանգստի, բացօթյա զբոսանքի ու մարմնամարզության ժամերը և տևողությունը	Առողջապահության նախարարի 2021				2	Փաստաթղթային Դիտողական	

	սահմանվում են Կազմակերպության օրվա կարգացուցակով՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար նախատեսված ընդհանուր հստակ ժամանակահատվածում՝ ըստ Կազմակերպության ղեկավարի կողմից հաստատված ժամանակացույցի:	թվականի մայիսի 31-ի N 46-Ն հրաման հավելված կետ 5:					
	Պացիենտի բացօթյա զբոսանքն ու մարմնամարզությունն անցկացվում են Կազմակերպության աշխատակիցների հսկողությամբ:	Առողջապահության նախարարի 2021 թվականի մայիսի 31-ի N 46-Ն հրաման հավելված կետ 7:					Դիտողական
19	Մարմնամարզությամբ զբաղվող պացիենտները պարբերաբար զննվում են թերապևտի կողմից՝ սոմատիկ վիճակն ու ֆիզիոլոգիական ցուցանիշները վերահսկելու նպատակով և, անհրաժեշտության դեպքում, վերջինիս ցուցումով իրականացվում են լաբորատոր-գործիքային հետազոտություններ և նեղ մասնագիտական խորհրդատվություններ:	Առողջապահության նախարարի 2021 թվականի մայիսի 31-ի N 46-Ն հրաման հավելված կետ 8:				2	Փաստաթղթային
20	Այն դեպքում, երբ հոգեբուժական կազմակերպությունում բացակայում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բուժման կազմակերպման համար անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվությունների, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների անցկացման հնարավորությունները, այդ ծառայությունները հոգեբուժական կազմակերպությունը կազմակերպում և ապահովում է այլ բժշկական կազմակերպություններում՝ պայմանագրային հիմունքներով:	Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 13:				3	Փաստաթղթային
21	Պացիենտի բացօթյա զբոսանքի և մարմնամարզության կազմակերպման համար Կազմակերպությունում վարվում է մատյան, որը պետք է լինի համարակալված և հաստատված Կազմակերպության տնօրենի ստորագրությամբ: Նշում 6*	Առողջապահության նախարարի 2021 թվականի մայիսի 31-ի N 46-Ն հրաման հավելված կետ 9:				2	Փաստաթղթային
22	Պացիենտի զբոսանքից օգտվելու և հրաժարվելու պարագայում, հերթապահ բուժքույրը կատարում է համապատասխան գրառում մատյանում, ինչն ամրագրվում է պացիենտի ստորագրությամբ:	Առողջապահության նախարարի 2021 թվականի մայիսի 31-ի				2	Փաստաթղթային

		N 46-Ն հրաման հավելված կետ 11:						
23	<p>Նշում 7*-ում նշված իրավունքները սահմանափակվում են մինչև իրավունքների սահմանափակման համար սահմանված հիմքերի վերացումը հոգեբուժական հանձնաժողովի, իսկ տվյալ պահին դրա ստեղծման անհնարինության դեպքում հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժի պատճառաբանված որոշմամբ, գրառում կատարելով պատճառաբանված որոշման, ինչպես նաև իրավունքների սահմանափակման պատճառների վերացման վերաբերյալ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում:</p>	<p>Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 6 մաս 1-ին: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12:</p>				3	Փաստաթղթային	
24	<p>Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի իրավունքի սահմանափակման վերաբերյալ պատճառաբանված որոշում կայացնելուց հետո բժիշկ-հոգեբույժը կամ հոգեբուժական հանձնաժողովը, նույն օրը իրազեկման թերթիկ հանձնելով, տեղեկացնում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում պատշաճ ծանուցում է նաև օրինական ներկայացուցչին և նրանց հանձնում պատճառաբանված որոշման կրկնօրինակը, դրա վերաբերյալ կատարելով գրառում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում:</p>	<p>Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 6 3-րդ մաս: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12:</p>				3	Փաստաթղթային	
25	<p>Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառվում են հոգեբուժական հանձնաժողովի, իսկ տվյալ պահին դրա ստեղծման անհնարինության դեպքում հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժի կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժի պատճառաբանված որոշման հիման վրա:</p>	<p>Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 7 մաս 1-ին: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12:</p>				3	Փաստաթղթային	
26	<p>Ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու դեպքում նույն օրը դրանց կիրառումը հիմնավորող գրառում է</p>	<p>Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին»</p>				2	Փաստաթղթային	

	կատարում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում, ինչպես նաև ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյանում. Նշում 8* .	օրենք, հոդված 7 մաս 9-րդ կետ 1: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12: Առողջապահության նախարարի 2021 թվականի փետրվարի 15-ի N 07-Ն հրաման:						
27	Երեխայի, ինչպես նաև անգործունակ ճանաչված անձանց նկատմամբ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու դեպքում դրա մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ծանուցում է նրանց օրինական ներկայացուցիչներին:	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 7 մաս 9-րդ կետ 2: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12:				3	Փաստաթղթային	
28	Ոչ ուշ, քան 30 րոպե պարբերականությամբ բժիշկ-հոգեբույժը զննում է ֆիզիկական զսպման ենթարկված հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին, ստուգելով կապերի ամրությունը, վերջույթների արտաքին տեսքը (գունավորումը, հնարավոր այտուցվածությունը), վերջույթների ջերմությունը, կապիչից ստորև գտնվող վերջույթների անոթազարկը, կապիչի տեղադրման հատվածում ցավի զգացողությունը, կապիչից ստորև վերջույթների զգայունությունը, և ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյանում կատարում համապատասխան գրառում:	Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 8 մաս 7-րդ կետ 2: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12: Առողջապահության նախարարի 2021 թվականի փետրվարի 15-ի N 07-Ն հրամանի հավելված:				2	Փաստաթղթային	

29	<p>24 ժամվա ընթացքում ֆիզիկական զսպման կիրառման ընդհանուր տևողությունը չի գերազանցում. 18 տարեկանից բարձր անձանց համար՝ չորս ժամը. 9-17 տարեկան անձանց համար՝ երկու ժամը:</p>	<p>Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 8 մաս 4-րդ: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12:</p>				3	Փաստաթղթային	
30	<p>Դեղորայքային հանդարտեցման միջոցներ կիրառող բժիշկը ոչ ուշ, քան մեկ ժամ պարբերականությամբ զննում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին (անոթազարկը, շնչառության արագությունը, մարմնի ջերմաստիճանը, հիդրատացիայի աստիճանը և գիտակցության մակարդակը) և ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյանում կատարում համապատասխան գրառում:</p>	<p>Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 9 մաս 4-րդ: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12:</p>				3	Փաստաթղթային	
31	<p>Մեկուսացման միջոցների կիրառումն իրականացվում է այդ նպատակով առանձնացված, հատուկ կահավորում ունեցող սենյակում:</p>	<p>Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 10 մաս 1-ին: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12:</p>				3	Դիտողական	
32	<p>Մեկուսացման միջոցների կիրառման դեպքում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը գտնվում է մշտական հսկողության ներքո (համապատասխան բուժաշխատողը գտնվում է մեկուսացման սենյակից դուրս կամ մեկուսացման սենյակի հետ ընդհանուր պատուհանով միացված հարևան սենյակում այնպես, որ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը</p>	<p>Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 10 մաս 2-րդ: Առողջապահության նախարարի 2021</p>				3	Դիտողական	

	<p>հնարավորություն ունենա ամբողջությամբ տեսնելու բուժաշխատողին, իսկ բուժաշխատողը հնարավորության ունենա հսկելու և լսելու հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին: Տեսանկարահանման միջոցները չեն կարող փոխարինել անձնակազմի մշտական ներկայությանը:</p>	<p>թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12:</p>						
33	<p>Մեկուսարանում կիրառվում են տեսանկարահանման միջոցներ (չեն կարող փոխարինվել անձնակազմի մշտական ներկայությամբ):</p>	<p>Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 10 մաս 2-րդ: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12:</p>				2	Դիտողական	
34	<p>Մեկուսացման միջոցները կիրառվում են 24 ժամվա ընթացքում. 18 տարեկանից բարձր անձանց համար՝ առավելագույնը չորս ժամ տևողությամբ, իսկ 9-17 տարեկան անձանց համար՝ առավելագույնը երկու ժամ տևողությամբ:</p>	<p>Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 10 մաս 3-րդ: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 12:</p>				2	Փաստաթղթային	
35	<p>Հոգեբուժական կազմակերպություններում գտնվող անձանց մոտ մարմնական վնասվածքների հայտնաբերման կամ ենթադրյալ բռնությունների վերաբերյալ գանգատների դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել իրավապահ մարմիններին:</p>	<p>Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 5 մաս 2-րդ կետ 3-րդ:</p>				2	Փաստաթղթային	
36	<p>Սննդի կամ հեղուկի ընդունումից հրաժարվելու ամբողջ ժամանակահատվածում պացիենտը մշտապես գտնվում է բուժանձնակազմի հսկողության տակ՝ բուժող բժիշկ-հոգեբույժը, ոչ աշխատանքային օրերին և ժամերին՝ հերթապահ բժիշկ-հոգեբույժը կամ միջին բուժանձնակազմը ոչ ուշ, քան մեկ ժամ</p>	<p>Առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 23-ի N 66-Ն հրաման հավելված կետ 3:</p>				3	Փաստաթղթային	

	պարբերականությամբ զննելով պացիենտին (անոթազարկը, շնչառության արագությունը, մարմնի ջերմաստիճանը, հիդրատացիայի աստիճանը և գիտակցության մակարդակը) կատարում է համապատասխան գրառում հիվանդության պատմագրում:						
37	Բուժող բժիշկ-հոգեբույժը, ոչ աշխատանքային օրերին և ժամերին՝ հերթապահ բժիշկ-հոգեբույժը կամ միջին բուժանձնակազմը պացիենտի կողմից սննդի կամ հեղուկի ընդունումից հրաժարվելու փաստն անհապաղ ներկայացնում է Կազմակերպության տնօրենին կամ տնօրենի բուժական գծով տեղակալին, ինչպես նաև պացիենտի օրինական ներկայացուցչին (առկայության դեպքում), դրա վերաբերյալ համապատասխան գրառում կատարելով և ստորագրելով հիվանդության պատմագրում:	Առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 23-ի N 66-Ն հրաման հավելված կետ 4:				3	Փաստաթղթային
38	Բուժող բժիշկ-հոգեբույժը, ոչ աշխատանքային օրերին և ժամերին՝ հերթապահ բժիշկ-հոգեբույժը կամ միջին բուժանձնակազմը պացիենտին, ինչպես նաև պացիենտի օրինական ներկայացուցչին (առկայության դեպքում) նույն օրը ներկայացնում է սննդից կամ հեղուկից հրաժարվելու հետևանքով առողջական վիճակի հետագա վատթարացման ռիսկերի մասին, ինչի վերաբերյալ համապատասխան գրառում է կատարվում հիվանդության պատմագրում և ստորագրվում:	Առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 23-ի N 66-Ն հրաման հավելված կետ 5:				3	Փաստաթղթային
39	Կազմակերպության տնօրենի հրամանով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ստեղծվում է հոգեբուժական հանձնաժողով*** որը տալիս է մասնագիտական եզրակացություն պացիենտի հոգեկան խանգարման և սննդից կամ հեղուկից հրաժարվելու կապի, ինչպես նաև պացիենտի առողջական վիճակի և անհրաժեշտ բժշկական օգնության և սպասարկման ծավալների վերաբերյալ	Առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 23-ի N 66-Ն հրաման հավելված կետ 6:				2	Փաստաթղթային
40	Բուժող բժիշկը պացիենտի կողմից ինքնուրույն սնվելու կամ հեղուկ ընդունելու փաստը արձանագրում է հիվանդության պատմագրում:	Առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի				2	Փաստաթղթային

		23-ի N 66-Ն հրաման հավելված կետ 10:					
41	Հիվանդանոցային վկայարկման արդյունքում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մոտ հիվանդանոցային պայմաններում բուժման ցուցումների բացակայության դեպքում, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոսպիտալացումը հոգեբուժական վկայարկումն իրականացրած բժիշկ-հոգեբույժի կողմից անմիջապես մերժվում է՝ պատճառաբանված գրառում կատարելով ամբուլատոր պացիենտների հաշվառման մատյանում: Նշում 9* _	Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 5: Առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 18-ի N 44-Ն հրամանի հավելված 2-ի Ձև N 2				2	Փաստաթղթային
42	Առանց անձը հաստատող փաստաթղթի անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց հոսպիտալացման դեպքում բժիշկ-հոգեբույժը կամ հոգեբուժական հանձնաժողովը մեկօրյա ժամկետում, գրավոր տեղեկացնում է իրավապահ մարմիններին հոսպիտալացման փաստի վերաբերյալ:	Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 22, մաս 3: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 6:				2	Փաստաթղթային
43	Հիվանդանոցային պայմաններում հետազոտման, բուժման կամ մասնագիտական խնամքի նպատակով հոգեբուժական օգնություն և սպասարկում ստացող անձին հոգեբուժական կազմակերպություն տեղափոխվելու (դիմելու) պահից մեկ ժամվա ընթացքում զննում է բուժող բժիշկ-հոգեբույժը, իսկ ոչ աշխատանքային օրերին և ժամերին՝ հերթապահ բժիշկ-հոգեբույժը:	Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 7:				2	Փաստաթղթային
44	Հիվանդանոցային պայմաններում բուժում ստացող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի զննման արդյունքները, հոգեկան վիճակի նկարագիրը, անամնեստիկ և կատամնեստիկ տվյալները, ախտորոշումները, նշանակումները, բուժման ծրագիրը գրանցվում են հոգեբուժական կազմակերպությունում հոգեբուժական օգնություն և սպասարկում ստացող անձի հիվանդության պատմագրում Նշում 10* _	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 17, մաս 9: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման				2	Փաստաթղթային

		հավելված 2 կետ 10: Առողջապահության նախարարի 2021 թվականի ապրիլի 26-ի N 25-Ն հրաման կետ 1 ենթակետ 1, հավելված 1: Առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 04-ի N 61-Ն հրաման:						
45	Հոգեկան խանգարման կլինիկական ախտորոշումը ձևակերպվում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոսպիտալացումից հետո մինչև 15 օրվա ընթացքում հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչին համապատասխան:	Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 11: Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 871-Ն հրաման:				2	Փաստաթղթային	
46	Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք հոժարակամ հոսպիտալացման հիմք են անձի հոգեկան խանգարման առկայությունը և բժիշկ-հոգեբույժի՝ անձի հիվանդանոցային ձևով հետազոտության կամ բուժման անհրաժեշտության մասին եզրակացությունը կամ օրենսդրությամբ սահմանված դեպքերում փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտությունը:	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 22, մաս 1: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 8:				3	Փաստաթղթային	
47	Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք հոժարակամ հոսպիտալացումը կարող է իրականացվել միայն անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի կամ գրավոր իրազեկված համաձայնության հիման վրա:	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք հոդված 22 մաս 2: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի				3	Փաստաթղթային	

		08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 8:						
48	16 տարին չլրացած երեխայի գրավոր իրազեկված համաձայնությունը տալիս է նրա օրինական ներկայացուցիչը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք հոդված 17 մաս 4-րդ:				2	Փաստաթղթային	
49	Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքից հոժարակամ հոսսափտալացված հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի դուրսգրումը իրականացվում է՝ անձի ցանկությամբ կամ անձի առողջացման և հոգեկան վիճակի բավարար լինելու դեպքում, եթե վերացել է հետագա հիվանդանոցային ձևով բուժման անհրաժեշտությունը՝ բժիշկ-հոգեբույժի եզրակացության հիման վրա, կամ հետազոտման կամ փորձաքննության ժամկետները ավարտվելու դեպքում	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք հոդված 23 մաս 1-ին: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 14:				2	Փաստաթղթային	
50	Դուրսգրումից առաջ հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը պատշաճ ծանուցում է անգործունակ ճանաչված անձի կամ երեխայի օրինական ներկայացուցչին՝ ծանուցման մեջ նշելով դուրսգրման օրը, ամիսը տարին և ժամը:	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք հոդված 23 մաս 2-րդ: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 14:				2	Փաստաթղթային	
51	Հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմած անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչի, հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալուց հրաժարվելու կամ այն դադարեցնելու պահանջի դեպքում (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), բժիշկ-հոգեբույժը պարզաբանում է հոգեբուժական օգնությունից և սպասարկումից	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք հոդված 17 մաս 7-րդ, մաս 8-րդ, : Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի				2	Փաստաթղթային	

	հրաժարվելու հնարավոր հետևանքները և հոգեբուժական օգնությունից և սպասարկումից հրաժարվելու փաստը գրի առնում անձի բժշկական փաստաթղթում, հաստատելով բժիշկ-հոգեբույժի և հրաժարվող անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչի ստորագրությամբ:	08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 14:					
52	հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին հարկադիր հիվանդանոցային բուժման ընդունելու համար հիմք է տվյալ անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը:	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 26, մաս 1: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման, հավելված 2 կետ 16			3	Փաստաթղթային	
53	Ոչ հոժարակամ հոսպիտալացման նպատակով հոգեբուժական կազմակերպություն տեղափոխվելու դեպքում անձն անհապաղ այդ մասին անձամբ տեղեկացնում է իր կոնտակտային անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչին, իսկ անհնարինության դեպքում տեղեկացվում է կազմակերպության կողմից՝ հնարավոր հասանելի եղանակով (հեռախոսային կապի, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով):	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 5, մաս 1-ին կետ 7 մաս 2 կետ 2:			2	Փաստաթղթային	
54	Հարկադիր հիվանդանոցային բուժման ընդունվելու դեպքում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը օրենքով սահմանված կարգով տեղեկացվում է իր իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակումների, հարկադիր հսկողություն կամ բուժում ստանալու նպատակի և պատճառների մասին:	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք, հոդված 26, մաս 2:			3	Փաստաթղթային	
55	Ոչ հոժարակամ հոսպիտալացվելուց հետո՝ 72 ժամվա ընթացքում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին պարտադիր հետազոտում է հոգեբուժական հանձնաժողովը:	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք հոդված 24 մաս 2 կետ 1: Առողջապահության			2	Փաստաթղթային	

		Նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 9:					
56	Ոչ հոժարական հոսպիտալացման հիմնավորվածությունը մասնագիտական հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությանը հաստատվելու դեպքում հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը 72 ժամվա ընթացքում դիմում է դատարան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարական բուժման ենթարկելու համար:	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք հոդված 24 մաս 2 կետ 2: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 9:				3	Փաստաթղթային
57	Մինչև մասնագիտական հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության հիման վրա դատարանի կողմից ոչ հոժարական կարգով հոսպիտալացնելու վերաբերյալ բուժման ենթարկելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելը հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի առանց նրա իրազեկված համաձայնության տրամադրվում են միայն շտապ և անհետաձգելի հոգեբուժական օգնություն և սպասարկում:	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք հոդված 24 մաս 2 կետ 2: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 9:				2	Փաստաթղթային
58	Հիվանդանոցային ոչ հոժարական բուժում իրականացնող բժիշկ-հոգեբույժը ամիսն առնվազն մեկ անգամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի վիճակի մասին մասնագիտական գրավոր կարծիք է ներկայացնում հոգեբուժական կազմակերպության հոգեբուժական հանձնաժողով հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ ոչ հոժարական բուժումը շարունակելու կամ դադարեցնելու հետ կապված հարցերը լուծելու նպատակով (հոգեբուժական հանձնաժողովը մասնագիտական կարծիքն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, քննում	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք հոդված 24 մաս 3: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 9:				2	Փաստաթղթային

	և տալիս է եզրակացություն ոչ հոժարակամ բուժումը շարունակելու կամ դադարեցնելու մասին):						
59	Ոչ հոժարակամ բուժումը կարող է տևել ոչ ավելի, քան վեց ամիս:	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք հոդված 24 մաս 4: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 9:				2	Փաստաթղթային
60	Մինչև ոչ հոժարակամ բուժման վեցամսյա ժամկետի լրանալը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մոտ ոչ հոժարակամ բուժման օրենքով սահմանված հիմքերը վերանալու դեպքում հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը դիմում է դատարան՝ անձին հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ դատարանի վճիռը վերացնելու պահանջով:	«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենք հոդված 24 մաս 5: Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 08-ի N 90-Ն հրաման հավելված 2 կետ 9:				3	Փաստաթղթային
